ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք, քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների և փորձագետների հետ համատեղ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման «Մինսկի գործընթացի անկախ քաղաքացիական նախաձեռնության» շրջանակներում, 2010 թվականի դեկտեմբերի 8-ին Թբիլիսիում ստորագրեցինք մի հայտարարություն, որով կոչ էինք անում հակամարտող կողմերի ղեկավարություններին՝

- վերջ տալ հակամարտության թեժացմանն ուղղված ռազմատենչ հռետորաբանությանը և քաղաքական ու տեղեկատվական ակցիաներին,
- անհապաղ քայլեր ձեռնարկել հրադադարի ռեժիմի ամրապնդման ու զինված միջադեպերի կանխման նպատակով և ապահովել շփման գծից դիպուկահարների անհապաղ հետ քաշումը,
- հակամարտության կարգավորման հիմնարար նորմերին՝ հիմնված Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնարար սկզբունքների վրա (ուժի չկիրառում, տարածքային ամբողջականություն, ժողովուրդների ինքնորոշման իրավունք և իրավահավասարություն), ավելացնել «վեճերի խաղաղ կարգավորում» սկզբունքը,
- ձեռնամուխ լինել ղարաբաղյան հակամարտության կարգավորման «ճանապարհային քարտեզի» մշակմանը:

Ցավոք, նախկինում «Մինսկի գործընթացի անկախ քաղաքացիական նախաձեռնության» կոչերն այդպես էլ հաշվի չեն առնվել և հրադադարի 20-րդ տարին մեր ժողովուրդները դիմավորեցին ոչ թե խաղաղ կարգավորման ճանապարհին, բարի դրացիական հարաբերությունների վերականգնման գործնական խնդիրների լուծման, համագործակցության և տարածաշրջանային ինտեգրման, այլ՝ պաշտոնական բանակցությունների գործընթացում ձևավորված փակուղային իրավիճակի, զորքերի շփման գծում լարվածության աճի և լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսման վտանգի մեծացման պայմաններում, որոնք կապված են նաև հետխորհրդային տարածքում սկսված գործընթացների հետ:

Հակամարտությունը արդեն իսկ հանգեցրել է մեծ աղետի՝ տասնյակ հազարավոր մարդկանց մահեր, հարյուր հազարավոր վիրավորներ և հաշմանդամներ, միլիոնից ավելի հարազատ օջախներից զրկվածներ, իսկ երկու ժողովուրդների միջև հակամարտության կարգավորման առաջընթացի բացակայությունը մեծ հիմնախնդիրներ է առաջացրել սոցիալ-տնտեսական բարեկեցության ստեղծման փորձերի, ուժեղ քաղաքացիական հասարակության, օրենքի գերակայության սկզբունքի վրա հիմնված ժողովրդավար պետականության և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխիքների համար:

Ստեղծված ստատուս քվոն չի կարող շարունակվել, «իրավիճակի սառեցում» տեղի չի ունենում. համարյա ամենօրյա կրակոցներից մարդիկ են զոհվում, ընդլայնվում է

ռազմական բախումների տարածքը, հակամարտության կողմերի միջև աճում է սպառազինությունների մրցավազքը, պետական և քաղաքացիական մակարդակներում հռետորաբանությունն ավելի արմատական է դառնում: Ստատուս քվոյի պահպանման հետագա փորձերը անտարակույս կդառնան նոր վտանգավոր միտումների անբաժան մաս, որոնք սպառնում են ոչ միայն համաեվրոպական անվտանգությանը, այլև՝ մեր երկրների անկախությանն ու ինքնիշխանությանը:

Ստեղծված պայթյունավտանգ իրավիճակում, ինչպես ցույց տվեց շփման գծում բռնության աննախադեպ ալիքն այս տարվա հուլիս-օգոստոս ամիսներին, նույնիսկ հակամարտության կողմերից մեկի թույլ տված աննշան սխալները կարող են օգտագործվել մեզ նոր պատերազմ պարտադրելու համար:

Մենք սատարում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ դեսպան Ջեյմս Ուորլիքի նախաձեռնությունը, որը շարադրված է 2014 թվականի մայիսի 7-ի «Լեռնային Ղարաբաղ. Կարգավորման ուղիներ» զեկույցում, ինչպես նաև Մինսկի խմբի համանախագահների 2014 թվականի մայիսի 12-ի հայտարարությունը: Այդ հավասարակշռված մոտեցման մեջ են պարփակված և՛ հակամարտության կողմերի, և՛ ԵԱՀԿ Մինսկի խմբի անցյալ ու ներկա համանախագահների երկարամյա բանակցությունների աշխատանքի ու փորձի արդյունքները: Գտնում ենք, որ երեք սկզբունքները և նշված վեց բաղադրիչներն իրենցից ներկայացնում են ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի խաղաղության համաձայնագրի և «ճանապարհային քարտեզի» գործուն հիմքերը:

Կարծում ենք, որ խաղաղ կարգավորման բանակցային գործընթացը մեր հասարակությունների համար պետք դառնա բաց և թափանցիկ: Այս համատեքստում կոչ ենք անում հրավիրել միջազգային համաժողովներ ղարաբաղյան հակամարտության կողմերի իշխանությունների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ՝ խաղաղ կարգավորման գործընթացի աջակցման և դրա գործնական կիրառման նպատակով:
Մենք սատարում ենք Խաղաղության համաձայնագրի իրագործման ընթացքում միջազգային ուժերի օգտագործման գաղափարը և շեշտում ենք, որ միջազգային ուժերի կազմում չեն կարող մտնել ոչ ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահ երկրները, ոչ էլ հակամարտության կողմերին հարևան պետությունները: Այդ համաձայնեցված սկզբունքների գործնական իրականացման համար միջազգային միջնորդությունը պետք է ազատ լինի որևէ աշխարհաքաղաքական կոնյուկտուրային նկատառումից ինչպիսին են ազդեցության ոլորտների համար պայքարը և տարածաշրջանում գերիշխանությունը:

Հրատապ կոչով դիմում ենք ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահող երկրների ղեկավարներին, ինչպես նաև մյուս երկրներին՝ դադարեցնել բոլոր տեսակի հարձակողական զենքերի մատակարարումը ղարաբաղյան հակամարտության

կարգավորման տարածաշրջանում: Ռազմական հակամարտության խաղաղ կարգավորումը միայն հնարավոր է հակամարտող կողմերի՝ փոխադարձ զիջումների գնալու պատրաստակամության, առավելապաշտական պահանջներից ու նախապայմաններից հրաժարման, մեր ժողովուրդների ընդհանուր ազգային շահերի գիտակցման, ինչպես նաև՝ միջազգային միջնորդների կողմից ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման անկեղծ ցանկության պարագայում:

Դիմում ենք կողմերի քաղաքական ղեկավարություններին, անկախ խաղաղ կարգավորման առանձին դրույթների սկզբունքների տարբեր մեկնաբանություններից, անվերապահորեն ձեռնամուխ լինել ղարաբաղյան Խաղաղության համաձայնագրի մշակմանը ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահ դեսպան Ջեյմս Ուորլիքի ս.թ. մայիսի 7-ի նախաձեռնության և ԵԱՀԿ ՄԽ-ի համանախագահների ս.թ. մայիսի 12-ի հայտարարության հիման վրա:

Կոչ ենք անում հակամարտության բոլոր կողմերի քաղաքացիական հասարակություններին, բոլոր քաղաքական և հասարակական ուժերին դառնալ խաղաղ կարգավորման ակտիվ մասնակից, սկսել անհրաժեշտ փոխզիջումների փնտրտուքը, հրաժարվել առավելապաշտական պահանջներից և ստանձնել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման պատասխանատվության իրենց մասնաբաժինը:

Դավիթ Շահնազարյան Արտակարգ և լիազոր դեսպան 1992-95թթ. Հայաստանի Հանրապետության նախագահի հատուկ հանձնարարություններով դեսպան	**Էլդար Նամազով** Ադրբեջանի Հանրապետության Նախագահի օգնական և քարտուղարության ղեկավար 1993-99թթ.

3-ը նոյեմբերի, 2014թ.
Հելսինկի, Ֆինլանդիա

Հայտարարությունը սատարել են՝

Արզու Աբդուլաևա, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա-Ադրբեջան, նախագահ, Օլոֆ Պալմեի խաղաղության մրցանակակիր, ԵՄ և ԱՄՆ կառավարության Մարշալի մրցանակակիր

Կարեն Օհանջանյան, Լեռնային Ղարաբաղի «Հելսինկյան նախաձեռնություն-92» կոմիտեի համակարգող

Նատալյա Մարտիրոսյան, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա-Հայաստան, նախագահ

Ալի Աբասով, պրոֆեսոր, քաղաքական վերլուծաբան

Զարդուշտ Ալիզադե, փիլիսոփայության դոկտոր, քաղաքական վերլուծաբան

Աղասի Ենոքյան, Քաղաքական և միջազգային հարաբերությունների հայկական կենտրոն, տնօրեն

Լեյլա Ալիևա, Ազգային և միջազգային հետազոտությունների կենտրոն, քաղաքական վերլուծաբան

Հայկակ Արշամյան, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն, պատմաբան, վերլուծաբան